

ՊՈՒԽԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(Բ. Լարանի ուսանող)

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ, ԴԵՊԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

Մի քանի օր առաջ Հ. Ճեմարանի վարչությունը որոշել էր ուսանողովով տանել մոտակա պատմական վայրերը:

Ապրիլի 18-ին, Պատմարագից հետո, ամբողջ Հ. Ճեմարանի ուսանողովով վերակացու Յ. Բողոքանյանի և պատմովիյան դասախոսների հետ կազմ ու պատրաստ, նրանում են վանքի ավոտմեքենան: Ըստ նախագիս մշակված ծրագրի, պիտի լինենք կարմիր բլում և ծանոթանացինք այնտեղ կատարված պեղումների հետ, այնուհետև պիտի այցելենք հայ գրողների պանթեոնը՝ տեսնելու մեծանուն Կոմիտասի գերեզմանը, և ապա, վերադարձին, կանգ առնենք Զվարթնոցում, և դասախոսովիյում լսեինք նրա ճարտարապետական նշանակովիյան մասին:

Մեքենան ճանապարհ է ընկնում: Առջևում գգվում է լամ ու երկար ասֆալտապատ ճանապարհը: Գարնանային դուրեկան զեփյուր շղում է դեմքերը: Հնչում է ուսանողների զրնգում, ուրախ երգը: Նրանք երգում են մեր սիրելի մայրաքաղաքին ծոնված երգը՝ «Երևան իմ, իմ հարազատ, սիրում աննման...» Քամին տանում է երգի հնչումները հեռու, շատ հեռու: Ճանապարհին կանգնում են մարդիկ և ուրախ հայացքով նայում մեր մեքենային:

Ճանապարհի եզրերին երևում են հայրենադարձների նորակառուց գեղեցիկ տները, որոնք տեսնելով, մարդ զգում է որ հայրենի կառավարությունը ամեն կերպ օգնում է իր հարազատ քաղաքացիներին՝ ստեղծելու բարեկեցիկ և երշամիկ կյանք: Մարդը որքա՞ն գնահատվում է մեր հարազատ երկրում:

25 րոպե հետո, նախքան Երևան համակը, մեքենան շեղում է իր ճանապարհը զարդարված ցածր ցածր՝ անցնում է պատմական Հրազդանը՝ Զանգում — զանգում — որը թիր պես կտրելով ապառները, առաջ է վազում, ժամ առաջ գնայ հասնելու իր կարուտած սիրառոյոր քրոջը՝ Արաքսին: Զանգուից անցնելուց 15 րոպե հետո, մեքենան կանգ է առնում ծիրանի նոր ծաղկած ծառերի տակ: Մենք արդեն Կարմիր բլումն ենք: Բոլորը անհամբեր վայր են իշխում և շտապում դեպի բլուրը, պեղումների վայրը:

Վերջապես բոլորի աշխի առաջ բացվում են կատարված պեղումները: Երևում են թրծած աղյուս շարված սենյակներ, հղկած քարեր, կարառներ: Ուսանողները հավաքվում

են դասախուների շուրջը և լսում նրանց քայլությունները: Նրանք պատմում են՝ թէ ի՞նչպես մեր թվարկությունից 7—6 դար առաջ, Կարմիր բլրի ամրոցը ուրարտական փոխարքաների ուղղենցիաներից մեկն է եղել Անդրկովկասում, պատմում են բազմաթիվ այն կոփիմերի մասին, որ տեղացիները մղել են ասորեստանցիների դեմ: Դասախուները կոնկրետ փաստերով ցույց են տալիս՝ թե ի՞նչպես բլրի ամրոցը կործանվել է հանկարծակի: սենյակների պատերի վրա երևում են հրտեհի հետքերը: Վարզվում է, որ ուրարտական այս ամրոցը մինչև 1935 թիվը հայտնի չի եղել գիտության մեջ, 1935 թվին երկրաբան Պաֆենուլցի գտած մի սեպագիր առիթ է ստեղծում ուշադրություն դարձնել բլրի վրա և սկսել պեղումները, որոնք շարունակվում են մինչև օրս: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի անմիջական նախաձեռնությամբ, Պրոֆ. Պիոտրովսկու ղեկավարությամբ, ամեն տարի Կարմիր բլրից հանում են նորանոր հարուստ նյութական կուտուրայի մնացորդներ:

Ուսանողները մանրամասն ուսումնասիրում են հողից մաքրված սենյակները: Ահա հսկայական այդ սենյակներից մեկը, որի երկարությամբ թաղված են խոշոր կարառների մի ամբողջ շարան, Ուրարտական իշխանի մատանն է: Այստեղ կարասների մեջ լցրել են Արարատյան դաշտի բարիքը: Ուսանողները ուշադիր դիտում են գեղված քարերը, որոնք հայտնաբերվել են հողի տակից: Մրանք անվիճելի ապացուց են Հայաստանի նախարարների զարգացած քարակոփության: Դասախունները պատմում են պեղումների ժամանակ այստեղ հայտնաբերված գործիքների, հացահատիկների և այլն մասին, որից կրնում է, որ ուրարտացիների օրով Հայաստանում զարգացած են եղել գյուղատնտեսությունը, անասնապահությունը և զանազան արհեստները: Այստեղից հայտնաբերվել են բրոնզե և պղնձե վահաններ, նիզակներ, նիտեր, առօրյա գործածական իրեր, որոնք և այժմ գտնվում են Պետական պատմական թանգարանում: Ուսանողները լուս լսում են դասախունների բացատրությունը: Մարդ մտովի մի բոպե պանում է 2,500 տարի առաջ՝ թե մարդիկ փեղպես էին ապրում աղյուսից շինված այս սենյակներում, ի՞նչպես կովում թշնամու դեմ ու պաշտպանվում: Ետ դաժան է եղել հին ժամանակներում:

Հազարավոր ռազմագերի ստրուկներ են աշխատել այս սենյակների և բերդերի վրա...: Թերդից դուքս նույնպես կան պեղված սենյակներ, որտեղ ապրել է հասարակ ժողովուրդը: Դասախոսների այս բացատրություններից հետո, տասնյակ հարցեր են տրվում հետաքրքրվող ուսանողների կողմից՝ թե ի՞նչպես են ջուրը բերդ տարել, բերդը քանի՞ պարիսպ է ունեցել, մարդու կմախք չի՞ն հանել, հալորդակցությունն ի՞նչպես են հաստատել ուրիշ տեղերի հետ և այլն և այլն, Դասախոսները մեկ մեկ պատափանում են բոլոր հարցերին:

Եքսկուրսիան Կարմիր բլրում վերջանալուց

պատ ծառերի ու թփուտների միջով: Ամենուրեք զգացվում է գարնան բույրն ու հրապուրանքը:

Ներս ենք մտնում ալգին, Մեր աշքի առջև երևում են մի շարք շիրմաքարեր: Դրանցից ամենաաշքի ընկնողը և մարմարիոնյա մեծադիր մի շիրմ է. դա Կոմիտասինն է: Բոլորը մի բոպե շրջապատում են աննման երաժշտագետի գերեզմանը, դիտում լուռ ու ակնապից: Բացատրելու, խոսելու կարիք չկա. ո՞վ չի ճանաչում նրան, ո՞վ չգիտե նրա գեղեցիկ երգերը, ո՞մ չի հուզել նրա «Կալի երգը», «Անտոնին» և մյուս երգերը. ո՞վ չգիտե այն անլուկ տառապանքները, որ քաշել



Ճեմարանի մի խումբ ուսանողներ

հետո, մեքենան շարժվում է դեպի մայրաքաղաք: Բոլորը մի անգամ ևս նայում են ըլրին՝ հնադարյան գաղտնիքներ պարունակող այդ մեծ գանձարանին:

Շուտով մեր մեքենան մտնում է մայրաքաղաք, մլանալով Թերթիայի անվան ասֆալտապատ պողոտայով և կանգ է առնում Ստալինի անվան այգու առաջ: Իշխում ենք մեքենայից և գնում տեսնելու երգի խոշորագույն վարպետ, հանճարեղ Կոմիտասի գեղեզմանը: Ճանապարհը անցնում է կանաչա-

ջվարբենցի խոյակներից մեկի մոտ

է հայ ժողովրդի այդ մեծ զավակը...: Բոլորի աշքի առջևից անցնում է կինոժապավենի պես մեծանուն երաժշտագետի ամբողջ կյանքը, սկսած մանկությունից մինչև մահը, մի կյանք, որը նվիրված է եղել միայն ու միայն իր ժողովրդին: Սակայն Կոմիտասն անմահ: Է; նա ապրում է իր երգերով յուրաքանչյուրի սրտում, մանուկից մինչ ծերոնին...:

Ուսանողները դասախոսների հետ նկարվում են Կոմիտասի գերեզմանի մոտ, շրջում են մյուա տապանաքարերը, ուր թաղված են

պատմաբան կեռն, արձակագիր Շիրվանզադեն, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը և ուղիշները:

Անցնում ենք Երևանի լայն, ընդարձակ փողոցներով, հոյակապ երեք շորս հարկանի տուֆաշեն գեղեցիկ շենքերի առջևով, որոնց առջև տարածվում են պուրակներն ու այգիները: Շատ ժամանակ չէ, որ տեսել ենք Երևանը, բայց այդքան կարճ ժամանակում ինչքան է փոխվել նա...:

Էջմիածնի խճուղով Երևանից վերադառնում ենք տուն: Իրար հետեւից թողնում ենք այգիները, նոր կանաչող բարդիները, տները: Ահա երևում են Ս. Էջմիածնի Մայր Տաճարի գմբեթները, Հոփիսիմեն: Ահա և Ջվարթնոցը: Չնայած բոլորն էի մի քանի անգամ տեսել են այդ հոյակապ հովարձանը, բայց նորից ուզում են տեսնել հայկական ճարտարապետության այդ գլուխ գործոցը: Ջվարթնոց անող ճանապարհը եզերված է ծառերով, իսկ շորս կողմը այգիներ են: Մեքենան թեքվում է մի փոքր աշ և կանգ առնում: Ուսանողները իշխում են մեքենայից և սկսում դիտել հովարձանը: Այստեղ նրանց դիմավորում է հնությունների պահպանման պետական կոմիտեի գիտական աշխատակից Պարույր Սահակյանը, որը սկսում է բացատրել Ջվարթնոց եկեղեցու հովարձանների մասին: Ուսանողները դիտում են արծվանիշ և կողովածե խոյակները, քանդակազարդ կամարները, որոնք ներկայացնում են իրենցից Արարատյան դաշտի նույն ու խաղողը: Նայում են տաճարի մեջանի ու գլորցի ավերակները, տաճար կառուցող վարպետների բարձրագանգակները, տաճարին հարակից շինությունները և այլն:

Ուսանողները լինում են նաև մոտիկ թանգարանում և տեսնում են մի շարք էքսպոնատներ հանգած Ջվարթնոցի ավերակներից՝ հոմարեն արձանագրություններ, արևի ժամացուց, կերամիկաներ, մողայիկներ: Թանգարանի պատերին կափակած են ճարտարապետ Թ. Թորամանյանի տաճարի ուստավլացիայի մի քանի գծագիրները, պատկերներ և տեղեկություններ, թավելով մարդ տեսնում է, որ դարերի ավերի ձեռքը քանդել է հայ ժողովրդի այդ հրաշակերու հուշարձանը: Նրա ամեն մի քարը, հողը, թուփը, խոսում են քեզ հետ, պատմում մեր հերոսական անցյալի մասին, պատմում քեզ մեր նոր, լուսապայծառ արշալույսի մասին, մեր նոր, Սովետական շքեղ ու գեղածիծաղ Հայրենիքի մասին:

Քեզ հետ, դարերի խավարի միջից պատմում քեզ, գիշարար ու աշխատասեր նախնիքների մասին, որոնք անման հիշատակ են թողել գալիք սերնդին, որը երախտամոռ չէ և գիտե ըստ հարկին գնահատել արվեստի գեղեցիկ հուշարձանները: Կանգնած Ջվարթնոցի ավերակների մեջ, մարդ ակամա մտածում է այն մասին, թե որքա՞ն ուրիշ Ջվարթնոցներ պիտի շիներ ստեղծագործ հայ ժողովուրդը, իթե ենթարկված վիներ օտար բրոնկալիների բարբարոս ու ավերի արշավանքներին: Միաժամանակ համոզվում ես նորից՝ թե որքա՞ն լավատես ու ճկուն է եղել հայ բազմաշարչար ժողովուրդը, որ այդքան անլուր հալածանքներից հետո, նորից ուրիշ է կանգնել, հառնել է մոխիրների միջից և կերտել է ու կերտում է նորանոր հրաշալիքներ...:

Նորից ու նորից դիտելով ավերակները, հուզմոնքով ու հիացումով դուրս ենք գալիս Ջվարթնոցից, ափսոսալով որ շըստով պիտի հեռանանք նրանից:

Դրում, կանաչ խոտերի վրա, ուսանողները սեղան են բաց անում: Բոլորը ուտում են, խմում, կատակներ անում, երգում և պարում:

Օրը երեկոյանում է ժամանակ է վերադառնալու: Բոլորը նստում են իրենց տեղերը և մեքենան ճանապարհ է ընկնում:

Վերջին անգամ հայացքով մնաս բարև ենք ասում Ջվարթնոցին: Չանցած մի քանի րոպե, արդեն էջմիածնում ենք,

Այսինքն արդյունավոր անցավ էքսկուրսիան: Որքա՞ն նոր տեղեկություններով հարցուտացրին իրենց գիտելիքները ուսանողները:

Հայրենի երկիրը քաղցր է ամեն ինչից. նրա ամեն մի քարը, հողը, թուփը, խոսում են քեզ հետ, պատմում մեր հերոսական անցյալի մասին, պատմում քեզ մեր նոր, լուսապայծառ արշալույսի մասին, մեր նոր, Սովետական շքեղ ու գեղածիծաղ Հայրենիքի մասին:

Եվ այդ բոլորից հետո, երդլում ես՝ սիրել սիրել անհուն սիրով քո մեծ, հզոր ու երջանիկ Հայրենիքը, նրա փառավոր ու հերոսական անցյալը և նրա նոր ու լուսաշող ապագան:

